ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 316 -Ա

ք.Արտաշատ

„17„ Օգոստոս 2026թ.

ԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 879 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2026 թվականի օգոստոսի 18-ից Անի Հակոբյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով:
2. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անի Հակոբյանի աշխատանքները գնահատելու նպատակով՝ փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հայկ Կտրակյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ամալյա Գրիգորյանին :

8/17/2026

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ